



## ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱԿԱԴ. Հ. ՄԱՆԱՆԴՅԱՆ

### ՀԱՄԱՌՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ\*

Տիգրանի պետությունը եղել է, բայ երեսույթին, ուույնախիսի բաղարական միամյուն, ինչպիսին եղել է Սրբմենյանների պարսկական պետության միությունը։ Հայաստանից կախումն ունեցող թագավորությունները պետք է ճանաչեին «արքայից արքա» Տիգրանի իշխանությունը, պետք է վճարեին նրան հարկ և նրա ռազմական արշավանքների ժամանակ ցույց տային օգնություն։ Տիգրանի լայնածավալ միացյալ պետությունը չի եղել, իհարկե, ամուր կազմակերպված ամբողջական պետությունն ան ճանդիսանում էր իրի ցեղերի և ժողովուրդների խարտարդես խառնուրդ, որոնք գտնվում էին հասարակական և կուտուրական զարգացման տարրեր սատիճաններում, եվ նա հեշտությամբ կազմալուծվեց Տիգրանի հենց առաջին անհաջողության ժամանակ։

Ինքը Հայաստանը այդ ժամանակաշրջանում, ինչպիս երեսում է Հունա-Հռոմեական աղքարքների տեղեկություններից, գտնվում էր իր անցման շրջանում՝ Քսենոփոնի ժամանակվա տոհմային հասարակարգից գեպի Արշակունյաց շրջանի ֆեղալական հասարակարգը։ Տիգրանի պետության մեջ, ինչպիս և նրա ռազմական գործողությունների ժամանակ զեկավար գեր էին խաղում հողագործական ավագանին և ազնվականությունը, որոնք ունեին ամրոցներ և հողային սեփականությունն նվաճած երկրների հարստությունների

խոշոր ժամար, հավանորեն, ընկնում էր նրանց ձեռքը։ Լինելով Հայաստանի գինվորական ուժի հիմքը և ունենալով իրենց ձեռքում ընդարձակ հողեր ու կալվածքներ, նրանք ամրացրել էին իրենց արքապետությունը և, բայ իրենցին, ավելի էին ուժեղացել, քան նախորդ շրջաններում։

Խոշոր հողատեր դասի ուժեղացման հետեւ վանքով, հավանարար սաստկացն էր նաև համայնական զյուղացիության նորտացման սրբոցներ և կախումն ունեցող գյուղական ազգաբնակության առաջացումը։ Սարկությունը, անշուշտ, գոյություն է ունեցել և, բայ երեսույթին, զգալի դեր է խաղացել, սակայն հիմնական արտադրական գործոն ուժ եղել է այդ դարաշրջանում ոչ թե մասսայական աշխատավոր ստրկությունը, այլ մասսայական աշխատավոր զյուղացիությունը, որը բաղկացած է եղել, գերազանցորեն, գյուղացի համայնականներից։

Պոմպեուսի Արևելքում տարած հաղթանակներից հետո Հայաստանը ճանաշված է եղել իրեն հոռմեական ժողովրդի բարեկամ և դաշնակից (66 թ. մ. թ. ա.) ու համարյա մեկ դարի ընթացքում գտնվել է Հռոմի ազդեցության տակ։ Այդ ժամանակվանից նա դառել է համաշխարհային հռոմեական պետության առաջապահը, որը տարածվում էր Արևելքում մինչև Եփրատ գետը և արաբական անպատճերը։

Տիգրանի հաջորդ՝ Արտավազդի ժամանակ (56—36 թ. մ. թ. ա.) հռոմեա-

\* Տարունակված «Եղմիածին» ամսագրի 1956 թվականի մ. VI-ից։

ցիք ձգտում էին նվաճել նաև պարթեական թագավորությունը և երազում էին վերականգնել Աղեքսանդր Մակեդոնացու պետությունը Հռոմի իշխանության տակ: Այդ փորձերը ու միայն շունչցան հաջողություն, այլև վերջացան Կրասոսի պարտությամբ (53 թ. մ. թ. ա.) և ապա նաև Անտոնիոսի (36 թ. մ. թ. ա.): Ուստի և Հռոմի սահմանը արևելքում մնաց Եփրատ գետը կամ Միջագետքը:

Այդ մշտական սահմանը հաստատելուց հետո, Հայաստանը դարձավ բուֆերային պետություն և ընկավ մուրճի ու զնդանի միջև՝ Հռոմայնցիների, որոնք սեղմում էին Արևմուտքից և վերածնված պարթեների հզորության, որոնք նորից ուժեղացել էին Հայաստանի թուանալուց հետո:

Իրար հետ մրցող Արևմուտքի մեծ պետությունների միջև գտնվող Հայաստանի այդ ճակատագրական դրությունը, որը շարունակվեց Բյուզանդական-Սասանյան և Բյուզանդական-Արարական դարաշրջաններում, եղել է այն գլխավոր պատճառներից մեկը, որոնք ցնցեցին նրա բարեկեցությունը և անրարենպաստ ազգեցություն ունեցան նրա քաղաքական և ներքին դարացման վրա:

Իրար հետ մրցակցող համաշխարհային պետությունների բաշխման հիմքում եղել են խորը տնտեսական պատճառները: Նրանց մեջ պայքարը տեղի է ունեցել, գլխավորապես, համաշխարհային առևտրական ճանապարհները ձեռք բերելու նպատակով, որոնք տանում էին գեղի Հնդկաստան և Չինաստան: Այդ կատաղի պայքարում Հայաստանը համախի խաղում էր միայն հենարանի կամ ուղղմարեմի գեր:

Այդ ուղղմարեմին տիրելը շափազանց կարևոր էր պայքարող պետությունների համար և պայմանավորվում էր ու միայն նրանով, որ Հայաստանի վրայով էր անցնում Հեռավոր-արևելյան տարանցիկ (տրանզիտային) ճանապարհ ճյուղերից մեկը, այլ առավել ևս այդ երկրամասի ուղղմական նշանակությամբ:

Ծնորհիվ իր բնական աշխարհագրական պայմանների, Հայաստանը միշտ հանդիսացել է իրեւ բնական ամրոց և ունեցել է առաջնակարգ ուղղմական նշանակություն՝ թե՛ պաշտպանության և թե՛ հարձակման համար:

Հենց այդ արժեքավոր ուղղմական նշանակությունը եղել է Հայաստանին տիրապետելու համար տեղի ունեցող մշտական կոփմների պատճառը: Դրանով է բացատրվում նաև այն, որ նույ պատմությունը միշտ միախառնվել է Մերձավոր Արևելքի մեծ պետությունների պատմության հետ:

Պարթևների կողմից Կրասոսին և Անտոնիոսին հասցրած պարտությունից հետո, Հայաստանում սկսվեցին կատաղի կոփմների խոռվահույզ ժամանակների և հռոմեական ու պարթևական դրածուների փոփոխակի թագավորություն:

Մեր դարաշրջանի սկզբում, Տիգրան 4-րդի և նրա բրոջ երատոյի մահով գաղաքաց Հայաստանում Արտաշեսյանների հարստությունը և սկսվեց միջիշխանությունը, որը տեսք մինչև Արշակունիների դահակալությունը (մեր թվարկության 66 թիվը): Որպեսզի Հայաստանը պահն իր ազգեցության տակ, Հռոմը գործում էր այս տեղ կաշառքի և սպանությունների օգնությամբ, և վարում էր երկպատկություններ, դժգոհություններ, որոնք արգելվ էին հանդիսական քաղաքացմանը:

Սակայն այդ քաղաքականությունը շունեցավ հաջողություն։ Հռոմի իշխանությունը Հայաստանում մնում էր անվանական, և Հայաստանում նկատելի կերպով ուժիգանում էր պարթևական ազգեցությունը, որին համարում էր հայ ազնվականության մեծ մասը:

Հռոմի համար բաղաքականությունը շունեցավ հաջողություն։ Հռոմի իշխանությունը Հայաստանում, ստիպեցին ներոն կայսերը 58—63 թվերին (մեր թվարկության), Հռոմեա-պարթևական կըռվեց հետո, համաձայնություն հնրել պարթևների հետ, որի հետեւնքով Հայաստանում հաստատվեց Արշակունիների պարթևական հարստությունը, Հռոմի անվանական գերիշխանության տակ: Հայկական նոր հարստության հիմնադիրը եղավ պարթևական Վաղարշ Թագավորի եղբայրը՝ Տրդատ 1-ինը, որը իր թագը ընդունեց Հռոմում ներոն կայսեր ձեռքից:

Արշակունյաց Հայաստանը պահեց իր գոյությունը, իրեւ անկախ պետություն, ամենի քան երեք հարյուր տարի (66 թվից մինչև 384—387 թ. թ. մեր թվարկության) և ապրեց ավելի, քան պարթևական թագավորության անկումը ու Սասանյան թագավորության հաստատումը Պարսկաստանում (մեր թվ. 227 թվին) և Բյուզանդական կայսրության առաջացումը (4-րդ դարի վերջում):

Հայաստանը շարունակեց մնալ համաշխարհային իրադարձությունների ոլորտում նաև Արշակունիների թագավորության ժամանակաշրջանում և կամովին կամ անկամ մասնակցություն է ունեցել տեղի ունեցող կոփմներում (2-րդ—4-րդ դ. մ. թ.):

Արշակունիները, բարձրանալով Հայաստանի թագավորական գահը 66 թվին հան-

ձին Տրդատի և Նրա հաջորդների, իրենց վշխանության առաջին ժամանակներում հասցրին երկիրը տնտեսական զարգացման և քաղաքական հզորության բարձր աստիճանի:

Տրդատի գահակալությունից հետո, Հայաստանի մայրաքաղաքը Արտաշատը, որ հոգինեական գորավար Կորբուլոսը ավերել էր (մեր թվ. 59 թիվն), նորից վերակառուցվեց ներոն կայսեր տված միջոցներով և վերանվանվեց Ներոնիա: Անուշետն այն ժամանակաշրջանում հիմնվեցին Մծուրն և Վազարշապատ քաղաքները: Դրանցից առաջինը՝ Մծուրնը շինել է Արշակունի թագավոր Անատրուկը 1-ին դարի վերջին քառորդում, կամ 2-րդ դարի սկզբում՝ հին Հայկական Տարոն գավառում, Արածանի և Ղարա-սու գետերի միախառնման մոտ, իսկ երկորորդ՝ Վազարշապատը, որ կոչվում էր նաև Կայենուպոլիս, կամ «ոոր քաղաք», հիմնել է հին Վարդգեսավան բնակավայրի տեղում Սահատումիկի որդի Վաղարշը, որը թագավորել է Հայաստանում հոգինեական կայսր Անդրիանոսի ժամանակ (117—138 թ. թ.):

Հենց այդ երեք խոշոր քաղաքների կառուցման փաստը 50—70 տարվա ընթացքում ցույց է տալիս Հայաստանի տնտեսական բարեկեցության արագ զարգացումը առաջին Արշակունիների ժամանակ:

Տրայանոս կայսեր (98—117 թ. թ.) ժամանակ 115 թիվն Հայաստանը վերածվեց հոգինեական պրովինցիայի (նահանգի), որը գտնվում էր Իիգատի վարչության իշխանության տակ: Սակայն, այդ դրությունը երկար շտեղ և Տրայանոսի հաջորդ Ադրիանոս կայսը (117—138 թ. թ.) հրամարվեց իր նախորդի նվաճումներից, իր գահակալության առաջին տարում վերականգնեց Արշակունիների թագավորությունը:

Այնուշետեւ, մինչև 3-րդ դարում Սասանյանների պարսկական միապետության առաջազդումը (226 թիվն մ. թ.), որը փոխարինեց պարթևներին, Հայաստանում՝ պարթևար վերսկավող հոգինեանքարթեվական կոիլիների ժամանակ տեղի էին ունենում փոփոխություններ հոգմայեցիների կամ պարթևների գերակշռությամբ: Մեր թվարկության 2-րդ դարում այնտեղ փոփոխակի թագավորում էին կամ հոգմայեցիների կամ պարթևների գրածուներ:

Սակայն, ընդհանրապես, այդ դարաշրջանում Հայաստանը գտնվում էր Հարեւան Պարթևաստանի քաղաքական և կուլտուրական խոր ազդեցության տակ, որը հիմնված էր այդ երկու երկրների համայնական-

կենցաղային կապի և սոցիալ-քաղաքական կազմակերպության ազգակցության վրա:

Արշակունյաց Հայաստանի ներքին կյանքի բնորոշ երեսայիններից է համարվում իրանական Պարթևաստանի կուլտուրայի և պետականության ուժիկ ազգեցությունը, և Հայաստանում նախարարական կամ ֆիզիական հասարակարգի վերջնական ձևավորումը, որը հիմունքները դարձություն են ունեցել ենական Արտաշեսյանների իշխանության ժամանակի:

Ինչպես այդ, նույնպես և հետագա միշնագորյան լարաշրջաններում Հայաստանի ներքին կյանքը զարգանում էր ֆիզիալական հասարակարգում ընդունված ձևերով, որը իր բազմաթիվ բնորոշ գծերով հիշեցնում է Արևմտյան Ելիուպայի ֆիզիալիզմը: Այստեղ ևս, ինչպես և Արևմտյան Ելիուպայում ֆիզիական հասարակությունը հանդիսանում էր իրեն գասակարգային բնույթի բազմաձարկ կառուցվածքը, ըստ որում, իրեն գերիշխող դաս ներկայանում էր այստեղ ևս զինվորական-հողատիրական ազնվականությունը, որը շահագործում էր իր հողերի վրա նստած, իրեն ենթակա գյուղացիներին:

Այս հասարակության վերին շերտը Հայաստանում կազմում էին նախարարական կամ իշխանական տոհմերը, հողային խոշոր կալվածների մասնական տերերը, որոնք իրենց սեփականություններում օգտըվում էին պետական իշխանության իրավունքով: Այդ նախարարությունները եղել են Արշակունիների վասալները կամ ծայրագավառների խոշոր իշխանությունների հիմավասարները: Արշակունյաց թագավորություններին տրված են եղել, իրեն ժառանգական իրավունքը, բարձրագույն պետական պաշտոնները: Այսպէս օրինակ՝ թագավորողի պատվավոր պաշտոնը եղել է Բագրատունիների նախարարական տոհմի ժառանգական արտոնությունը: Հայկական գորաքանակի բարձրագույն Հրամանատարությունը ժառանգարար հատկացված է եղել Մամիկոնյանների տոհմին: Հազարավետների իշխանությունը, որնց վրա գրված են եղել գյուղացի-շինականների գործերը վարելու և պետական տուրքերին վերաբերող վարչական պարտականությունները, պատկանում էր, ըստ երկույթին, Գնունիների տոհմին: Կայսերական գորամասերի (զվարդիա) իշխանությունը և թագավորի պաշտանությունը եղել է Խոռոչունիների իրավասության տակ, իսկ Արշակունիների գանձերի, ամբողջունների և կալվածների վարչական իրավունքը և թագավորական հարեմի հըսկողությունը եղել են Մարդարար իշխանների

Նախարարական տոհմի արտօնությունը: Գոյություն են ունեցել նաև ուրիշ պալատական պաշտոններ, որոնք բաշխված են եղել առնվատոհմ ընտանիքների մեջ:

Հայաստանի ֆեոդալական-նախարարական հասարակության երկրորդ միջանկյալ խումբը բաղկացած էր արտօնյալ մանր հողատերների լայն խավից, որ կոչվում էին ազատներ, որոնք եղել են Արշակունի թագավորների կամ խոշոր ու մանր հողային սեփականատեր նախարարների վասաները: Ազատների դասը իր սոցիալ-տնտեսական դրությամբ համապատասխանում էր ազնվական զինվորներին, կամ միջնադարյան նվրոպայի ասպետներին: Նրանց համար պարտագիր էր ծառայել Արշակունիների կամ նախարարների հեծելազորում: Ազատները ազատված էին հարկատվությունից, հեծելազորում ծառայելու համար, ստանում էին պայմանական-ժառանգական հողամասներ կամ ֆեոդներ, որ կոչվում էին ժիստակի:

Ֆեոդալական հասարակության երրորդ խումբը կազմում էին հողին ամրացված կախումն ունեցող զյուղացի շինականները, որոնք շատ բաներում հիշեցնում էին բյուզանդական կոլոններին: Այդ խումբը եղել է երկրի հարկատու բնակչությունը, որը վճարում էր հողատուրք (բանքա) և կատարում էր «կոռա-ի պարականությունները»:

Ստրկությունը զգալի գեր էր խաղում, սակայն այդ ստրկությունը եղել է գերազանցորեն տնային: Ստրուկներ են ունեցել Արշակունաց Հայաստանում նախարարները և ազատները, նաև եկեղեցիները, վանքերը և նույնիսկ առանձին հոգևորական անձինք: Սակայն իր ծավալով, ստրկությունը Հայաստանում յի կարող ունենալու ոչ մի համեմատություն հին Հռոմի կամ Հռոմանասնի ստրկության հետ: Արտադրության հիմքը այստեղ եղել է ոչ թե ստրկական աշխատանքը, այլ զյուղացի շինականների աշխատանքը:

Արշակունյաց ժամանակի և հետագա դարաշրջանների ֆեոդալիզմը ընսրոշվում է, բացի այդ, տրանզիսային, այսինքն՝ փոխարարական արտաքին առևտուրի զարգացմամբ և գերակշռությամբ, և Հայաստանում նոր բաղաբների առաջացմամբ, որոնք տեղաշրջագած են եղել համաշխարհային առևտուրի հյուսիսային ճանապարհի վրա, որ Զինաստանից ու Միջին Ասիայից զնում էր դեպի Սև ծովի արևելյան նավահանգիստները:

Հռոմի և ապա Բյուզանդիայի գրաված Միջերկրական և Սև ծովի ծովափնյա շրջանները ծառայում էին նրանց ոչ միայն

նվաճողական բաղաքականությանը, այլև լայն արտաքին առևտորի նպատակների համար:

Հայաստանը, որի վրայով զնում էին Հյուսիսային տարանցիկ (տրանզիսային) ճանապարհները գեպի Սև ծովը, խաղաղ ժամանակը զգալի գեր էր խաղում այդ առևտուրի նաև ծառայում էր իրեն սարանցիկ Երկիր՝ շինական մետաքսի և այլ արժեքավոր ապրանքների փոխազրության համար, որոնք արտահանվում էին գեպի Արևմուտք՝ Զինաստանից, Միջին Ասիայից և Հյուսիսային Հնդկաստանից:

Հենց դրանով է բացատրվում Արշակունիների և Բյուզանդական-Սասանյան դարաշրջանում մի շարք նոր բաղաբների առաջցումը, որոնցից նոր բաղաբները եղել են Վահարաջապատը և առևտուրի համար ապրանքները փոխազրության համար, որոնք արտահանվում էին գեպի Արևմուտքը՝ Զինաստանից, Միջին Ասիայից և Հյուսիսային:

Հատկապես մեծ նշանակություն է ունեցել միջազգային առևտուրում Հայաստանի մայրաքաղաքը Արտաշատը, որը զառել էր փոխազրվող ապրանքների պահպատապայիր և միջազգային առևտրական փոխանակության գլխավոր կենտրոններից մեեր:

Պարթևական վերջին Արտավան թագավորի սպանությունից ու նոր-պարսկական Սասանյան անհատության հիմնադրությունը հետո (227 մ.թ.), Հայաստանը, որտեղ շարունակում էր թագավորել Պարթև Արշակունիների ազգակից հարստությունը (դինաստիան), խիստ փոխեց իր բաղաքականությունը Հռոմի հետ մոտենալու ուղղությամբ: Ուստի և բնական է, որ Սասանյանները թնամարտու էին վերաբնիկու գեպի հայ Արշակունները և աշխատելու էին նրանց ոչնչացնել:

Առաջացած համար կոնկուրում, որ շարունակվեց Յ-րդ դարի քննթացքում, հայտնակը սովորաբար տանում էին Սասանյանները: Վերջավագան, Յ-րդ դարի վերջում, ջախչական հարփածից հետո, որ հումհական Դաւերիու զարավարը հասցըել էր պարսկիներին (297 թ.), Արշակունյաց Հայաստանը ժամանակավորապես ազգայի շրացեց Հռոմյան վերագույն հովանու տակ:

Այսուհետեւ, հայմական զանի վրա հաստաված ծրագա Յ-րդը գառավ Հռոմի հավատարիմ վասալ:

Հռոմեական կայսրության հետ ունեցած Հայաստանի այդ վաստական կապի հնատեանքներից մեկը եղավ հայերի հեթանոսական կրոնի վաճումը և բրիտանության ընդունումը Հայաստանում, որը 4-րդ դարում հայտարարվեց իրեն պետական կրոն, ինչպես ամբողջ հառմեական կայսրության մեջ, այնպես էլ վասալական Հայաստանում:

Արշակունիների քաղաքականությունը՝ Արեւելյան հռոմեական կայսրության հետ քաղաքական և կուտուրական բարեկամական կապեր հաստատելու ուղղությամբ և հայերի սերո զաշնակցային կապը հոոմակցիների հետ բնդգեմ զգոր Սասանյան Պարսկաստանի, Հայաստանի համար եղավ կորստարեր։

Մեր թվականության 4-րդ դարում, Հոռմեա-պարսկական կոփիները վիրակսկեցին արտասովոր կատարությամբ, և Հայաստանը, որ անրնդ համ կովում էր, իրքի հոոմեցիների կողմանակից սպասելով իր ուժերը, կարճ ժամանակից հետո զարձավ հոոմեական կայսրության երգմնազանցության զոհը՝ 363 թվին Հովիանոս կայսեր Արեւելի գեմ ունեցած անհաջող արշավանքից հետո (361—363 թ. թ.), նրա հաջորդ Հովիանոսը (363—364 թ. թ.), խաղաղության կորեցվ պարսից Շապուհ 2-րդի (310—379 թ. թ.) հետո ոչ միայն զիջեց նրանց Անդրտիգրիայն երկրները՝ Աղձնիքը, Կորդունը և Մազկեքը, այլև անամոթ կերպով դավաճանեց իր զաշնակից հայերին և մատնեց նրանց պարսիկների ձեռքը։

Հոոմեական պատմագիր Ամմիանոս Մարցինի վկայությամբ, որը ժամանակակից է եղել այդ իրադարձություններին, խաղաղության պարմանազրում եղել է, Հայաստանի համար կորստարեր, ծայր աստիճանի մի ամոթարեր կետ։ Համաձայն այդ կետի, հոռմեացիք պարտավորվել էին ցույց շտալ Հայաստանի թագավորին օգնություն, որը, ինչպես վկայում է Ամմիանոսը, եղել է նրանց մշտական և հավատարիմ բարեկամը։

Հոոմեացիների պարտությունից և 363 թվին ամոթալի խաղաղություն կնքելուց հետո, հայ Արշակունիները թողնված են եղել իրենք իրենց և ստիպված են եղել անհավասար կոփի մղել հաղթական Պարսկաստանի դեմ, առանց զաշնակիցների։ Կորստյան մատնված երկրի այդ կոփիը, հերոսությամբ ու ահավոր զրամատափողով լցված, եղել է ին հայկական ժողովրդական վեպի հիմնական թեմաներից մեկը, որը պահպանվել է 5-րդ դարի պատմիչ Փավստոս Բուլղանդյու պատմության մեջ։

Այդ կոփի վաճիմանը եղել է կանխորոշված։ Նա վերշացավ նրանով, որ պարսիկների կողմից ավելիված ու բայրարված Արշակունյաց Հայաստանը դադարեց այնու գոյություն ունենալ, իրքի անկախությունը պահպանվել է հանձնարեղ գյուտին։

սղետություն, և ընկալ օտարժիքի լուծի տակ։

384—387 թվերին Շապուհ 3-րդի (383—388 թ. թ.) և Թնողոսիոս 1-ի (379—395 թ. թ.) ժամանակ Հայաստանը բաժանել են իրար մեջ Սասանյան Պարսկաստանը և Արեւելյան-Հոոմեական կայսրությունը։

Այդ դեպքիրից հետո երկու Հայաստանները՝ Արեւելյանը կամ Պարսկականը և Արեւելյանը կամ Բյուզանդականը, մնում էին հետագա զարերում համաշխարհային պատմական իրադարձությունների հանգուցում։

Պարսկաստանի և Արեւելյան-Հոոմեական կայսրության կատաղի կոփիը, որը շարութակից նաև Հայաստանի բաժանումից հետո, ընդունեց արտարին կրօնական գունավորում։ Ենորքիվ սահմանային հայկական երկրամասի սաղմական կարեւության, թշնամի պետությունները վարում էին շափական համար կոփիներ հենց իր Հայաստանի միջում, նպատակ ունենալով կուտուրապես ու կրոնով միաձուկել և կուլ տալ հայությունը։

Անսովոր համառությամբ վարում էր իր միաձուման բաղադրականությունը 4-րդ—5-րդ դարերում Սասանյան Պարսկաստանը, որը զրախի էր Արշակունյաց Հայաստանի մեծագույն մասը։ Նրա ծրագրված չիջեցը, որոնք նպատակ ունեին վերականգնել Հայաստանում զրադաշտական կրօնը և հայ ժողովրդի իրանականացումը շարունակվեցին երեխնակի ընդհատումներով համարյա մի ամրող դար։

Արեւելյան Հայաստանի վրա, որը կորցրել էր իր բաղադրական անկախությունը, կախվել էր այդ ժամանակաշրջանում մահացու վտանգ՝ նաև նրա լեզվի կորստյան և նրա ուրումն կուլտուրայի ունշացման, վտանգ էր սպանում հենց իրեն՝ հայ ժողովրդի գոյությանը։

Սակայն, չնայելով Սասանյան Պարսկաստանի մեջմանը, սանձարձակությանը և համար ձգտմանը՝ կոտրել և ոչնչացնել Արեւելյան Հայաստանի ներքին ինքնուրույնությունը և կուլտուրական ինքնազոյությունը, նա կարողացավ պաշտպանել իրեն։ Իր կուլտուրայի և լեզվի պահպանան համար Արեւելյան Հայաստանը պարտական էր ոչ միայն ապրուտամբած ժողովրդի հայությանը և դիմադրական կարողությանը, այլև 4-րդ դարի վերջին Մեսրոպ-Մաշտոցի հայ գրերի հանձնարեղ գյուտին։

(Շարունակելի)